

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՆԱՍ ԿՐՈՆԱԿՈՐ ՆԿԱՐՈՂ

(1415? - 1490?)

Մինաս Նկարող ծնած է 1415ին ժողովրդական ծառայողի ընտանիքում, մայրը կը կոչուէր Մարմէլիք: Ունէր քոյր մը՝ Խուսիկանիք: Աշակերտած է Մկրտիչ Օրբէլինց Վարդապետին, Արզեւանայ կամ Յուսէան Որդւոյ Վանքին մէջ: Իր գործունէութեան զլիաւոր կեդրոնները եղած ըլլալ կը թուին Արզեւանայ Վանքը եւ Աղթաւ մար, ուր ծաղկած եւ նկարադարդած է չըբջակայ դասնական վայրերու մէջ գրուած բազմաթիւ ձեռագիրներ: Ունեցած է աշակերտներ. ծանօթ են Մուրատ սարկաւազ՝ ծաղկող (1460 - 1471), եւ Կարապետ Բերկ կրցի Նկարող (1471 - 1500):

Մինաս ընդհանրապէս զբաղած է մանրանկարչութեամբ, եւ եղած է բազմադրան Նկարող՝ տէր բնածին տաղանդի եւ ինքնուրոյն ոճի: Իր գործերէն յայտնի են չուրջ երեք տասնեակ: Կր ներկայացնենք ժամանակագրական կարգով:

1.- 1432, Մաշտոց, օրինակուած Կարապետ քարտուղարի ձեռքով, Արճէչի մէջ, Օրբէլինց Մկրտիչ Վարդապետի համար, եւ ծաղկուած Մինաս դպրի կողմէ, զոր կը կոչէ իր «Հոգեւոր որդեակը»՝ Նոտարք, Թիւ. 102, էջ 101: Փերդալէմեան:

2.- 1433, Աւետարան, օրինակուած Երզնկացի Կարապետ Գահանայի ձեռքով, Արճէչի մէջ, ասկերիչ Յովհաննէսի համար, ծաղկուած եւ նկարադարդուած Մինասի կողմէ՝ ինքնատիպ ոճով: Ձեռ. Երեւանի, Թ. 5172:

3.- 1437, Շարական, օրինակուած Աթաբէկի որդի Գրիգոր կրօնաւորի ձեռքով, Արզեւան Անապատի մէջ, Յովհաննէսի որդի

Գրիգոր կրօնաւորի համար. ծաղկած է Մինաս, ըստ երեւոյթի օրինակ ունենալով Սարգիս Գիծակէն նկարադարդուած Շարական մը. Ձեռ. Ս. Յ. Թ. 2479:

4.- 1439, Աւետարան, օրինակուած Գրիգոր կրօնաւորի ձեռքով, Արզեւան Վանքի մէջ, Առաքաւաստուր կրօնաւորի համար. Մինաս նկարադարդած է երփներանգ զոյնեքով. Ձեռ. Յ. Քիւրտեանի, Թ. 65: Սիոն, 1970, էջ 315:

5.- 1441, Աւետարան, օրինակուած Մեծոփեցի Թովմա Վարդապետի ձեռքով, տիւ կին Գուլիաշայի համար. ծաղկած է Մինաս. Ձեռ. Երեւանի, Թ. 3892: Յիշտ. Ժե. Դարի, Ա. Ման, էջ 521:

6.- 1445, Աւետարան, «Մեռնայարոյց», օրինակուած Մանկասարենց Յովհաննէս Կրքի ձեռքով, Արճէչի մէջ, Յովհաննէս կրօնաւորի համար. ծաղկած է Մինաս. Նոտարք, Թ. 154, էջ 148:

7.- 1448? Աւետարան. Ձեռ. Յ. Քիւրտեանի, Թ. 49: Սիոն, 1970, էջ 319:

8.- 1451? Աւետարան, օրինակուած ըմտեփանոս դրչի ձեռքով, Հաւանաբար Փոքր Ակոռոյ Վանքի մէջ. ծաղկած է Մինաս. Ե. Լալայեան, Յուլակ Ձեռ. Վասպուրականի, Թիւ 216, էջ 529: Յիշտ. Ժե. Դարի, Բ. Ման, Թ. 269:

9.- 1452, Աւետարան, գրուած Վարդան Երէցի ձեռքով, Վանի մէջ, տանուտէր Յովհաննէսի համար. ծաղկած է Մինաս. Նոտարք, Թ. 186, էջ 169:

10.- 1454, Աւետարան, գրուած Մանկա-

սարենց Ծովհաննէսի ձեռքով, Արճէշի եւ
Լիմի մէջ, Էւստաշի որդի Վարդան կրօ-
նակոյի համար, նկարագրուած է Մինաս -
Ձեռ. Երեւանի, Թ. 6570: Յիշատ. ԺԵ. Դաս-
րի, Դ. Մանն, էջ 41: 1

11.- 1455, Աւետարան, օրինակուած Դա-
ւիթ Քանանայի ձեռքով, Արճէշի մէջ, իր
անձին համար. նկարագրուած է Մինաս -
Ձեռ. Ս. Թ. 3815: Սիւն, 1950, էջ 228-
233:

12.- 1456, Աւետարան, օրինակուած
Մանկասարենց Ծովհաննէսի ձեռքով, Դա-
ւիթի որդի հէրակոս Վարդան կրօնաւորի հա-
մար. ծաղկած է Մինաս՝ հմտութեամբ եւ
հաշկով. - Ձեռ. Երեւանի, Թ. 5629: Յիշատ.
ԺԵ. Դաւիթ, Բ. Մանն, էջ 72:

13.- 1456, Աւետարան, գրուած Կառլոյ
Անապատին մէջ Խաչատուր արեղայի ձեռ-
քով. նկարագրուած է Մինաս, որու մասին
յոյժ շահեկան տողեր ունի գրիչը. «Եւ
զարձեալ աղաչեմ յիշի յաղաքս ձեր ըզ-
տէր Մինաս քաջ նկարաւն, որ յար եւ ըը-
ման է Բերսէլիլի հոգիքնկալ առաջին ըը-
կարողին տապանակին, եւ է յաշկերտաց
տուրք վարդապետացն Թումային Մկրտիչ
Արեւիկեց վարդապետին, եւ է բանիբուն եւ
հոգիքնկալ արպէտ գվարդապետին իւր ամե-
նայն իմաստութեամբ եւ հաւքարփեմ շը-
նորեալն իլի, որ եւ գմեց արծառի արար
իւրն ի ծառայութիւն եւ հոգեւոր իւր-
րատակամ եւ եղբայրական սիրով սիրեաց
զմեմ եւ յորով ժամանակս կացաք ի միա-
սին եւ վայելեցաք զմօր իմաստութիւնն
եւ զխրատն: Տէր Աստուած արարիչն ամե-
նայն արարածոց, որ գարգարէ գամեմայն
արդարսն, նոյնպէս յաւապայծառ պատ-
մունքանս եւ աստղայից պսակաւ գարդա-
րեսցէ ցոլէր Մինաս նաղաշն եւ գեաշոյ իւր
գլխիսքումն եւ գմայրն գլխորմելիքն, եւ
գամեմայն արեմն մերձաւորս իւր. . . » -
Ձեռ. Բարիգի Աղգ. Մատենադարանի, Թ.
18: Սիւն, 1951, էջ 142, Ս. Տէր Ներսէս-
եան:

14.- 1456, Մաշտոց, օրինակուած Ծով-
հաննէս Մանկասարենց եւ Մկրտիչ գրիչնե-
րու ձեռքով, Աբրահովնեցի Ազարիա Արքե-
պիսկոպոսին համար, ծաղկած է Մինաս -
Ձեռ. Ե. Բիւրեղեանի, Զայ. Եկղ. 1951,
էջ 21: 1

15.- 1452-1457, Յայտնաւորք, գրուած
Դաւար եւ Ծովհաննէս գրիչներէ, Լիմ, Սու-
խարայ Վանք եւ Արգելան, Ստեփանոս Զա-
րիպչակի համար. ծաղկած է Մինաս -
Ձեռ. Երեւանի, Թ. 4472:

16.- 1458, Սաղմոսարան - Գատարազա-
մատոյց ք ժամագրիչ, օրինակուած Իգ-
նատիոս կրօնաւորի ձեռքով, Խառարասպայ
Վանքին մէջ, Զաքարիա Վարդապետի հա-
մար. ծաղկած է Մինաս - Ձեռ. Ե. Զաքար-
եանի: Արտ. Արք. Սիրմէեան, Յուդակ
Հայ. Ձեռ. Եւրոպայի. . . 1950, էջ 1:

17.- 1460, Զաշոց, գրուած Ծովհաննէս
Քահանայի ձեռքով, Արճէշի մէջ, Ստեփա-
նոս Զարիպչակի համար, որ հետագային
(1465) կը նուիրէ զայն Աղթամարի Վան-
քին: Նկարագրուած է Մինաս, որու մասին
գեղեցիկ տողեր ունի գրիչը. «Եւ աղաչեմ
յիշի ի Տէր Աստուած գմայալք նկարաւ տա-
րա ցոլէր Մինաս արքանեալ կրօնաւորն, ըզ-
հաղցրաւսն եւ զհեղեղեղին, զաղարմածն
եւ զպգատակներն, եւ գամեմայն առաքի-
նութեամբ գարգարեալն, որ յար եւ նման
է Աղդէ կերպասագործին, որ եւ Դ. (4) առ-
րի եղբայրական սիրով նախախնամեաց ըզ-
մեց ի յԱղթամար կղզիս: » - Ձեռ. Երեւանի,
Թ. 982: Լ. Ս. Խաչիկեան, Յիշատ. ԺԵ. Դա-
րի, Բ. Մանն, էջ 135:

18.- 1461, Աւետարան, գրուած Վարդան
Քահանայի ձեռքով, Վանի մէջ, Մկրտիչ
Քահանայի համար. նկարագրուած է Մի-
նաս - Ձեռ. Նիւ Եորքի P. Morgan Թանգա-
րանի, Թ. 749:

19.- 1462, Յայտնաւորք, գրուած Խա-
չատուր արեղայի ձեռքով, Կառլոյ Անապա-
տին մէջ, Ստեփանոս եւ Խաչատուր արեղա-
ներու խնդրանքով. ծաղկած է Մինաս, ու-
րուն մասին գրիչը ունի սա գնահատական
տողեր. «Այլ եւ յիշեցէ յաղաքս ձեր
գլխիսքումն ծաղկաւն, որ յար եւ նման է Բեր-
սէլիլի՝ գարդարաւորն տապանակին, եւ
կրօնութեամբն՝ Յեսուայ որդոյ Նաւայ,

և իմաստութեամբն՝ Սողոմոնիմ. և զծնաւսն իւր՝ զՄաղքում եւ զՄսրք-Մելիքն, եւ զգոյրն զհաւթումն, եւ զԱկոբ քահանայն...»
 2. *Ձեռ. Երեւանի, Թ. 4883: Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, էջ 182:*

20. 1462, Աւետարան, օրինակած է Վարդան Երէց, Վանի մէջ, տառնուէր ըՍ. տեփանոսի համար. ծաղկած է Մինաս. 2. *Ձեռ. Ս. Թ. 1799:*

21. 1464, Եարակնոց, օրինակուած Զաւարդ զրէն, Արգելան մենաստանի մէջ, Զաւարդի որդի Վարդան կրօնաւորին համար. ծաղկած է Մինաս. 2. *Ձեռ. Երեւանի, Թ. 3481:*

22. 1465ին Հռչակաւոր եւ անուանի նկարող տէր Մինաս նկարադարդած է Հին Եարակնոց մը, գրուած Սիսի մէջ, ձեռամբ Հէթում Քահանայի (ԺԳ. Դարու վերջերը մօտաւորապէս). 2. *Ձեռ. Լէյտընի Համալսարանի, OR. 5521:*

23. 1466, Աւետարան, գրուած Արգելան Վանքին մէջ, ձեռամբ Բերկրեցի Աթարեկենց Գրիգոր զրէի, Մինաս կրօնաւորին համար, որ ծաղկած է իր ստացած Աւետարանը: Սոյն Գրիգոր զրէի մօտ ալ կը կարդանք գովասանական առդեր զամենիմաստ եւ հանձարեղ զիտմակամ Մինաս ծաղկողի մասին, զոր յար եւ մամն է Բերսելիէի Ակա-

րազիմ տապանակին».
 2. *Ձեռ. Երեւանի, Թ. 9858: Սիոն, 1970, էջ 320:*

24. 1467, Աւետարան, օրինակուած Կաթակոտ զրէի ձեռքով, Ոստանի մէջ, Սուրբ զանաւոր Համար. նկարադարդած է Մինաս. 2. *Ձեռ. Երեւանի, Թ. 6390:*

25. 1469, Աւետարան, գրուած Մանկասարենց Յովհաննէս Երէցի ձեռքով, Արգելանի մէջ, Ամիր Սարգիսի համար. ծաղկած է Մինաս. 2. *Ձեռ. նախապէս Սվաճեստի, այժմ Ս. Թ. Բ. 3427:*

26. 1475, Աւետարան, օրինակուած Կաթակոտ զրէի ձեռքով, Վանի մէջ, աղքատ Յովսէփի համար. ծաղկած է Մինաս. 2. *Ձեռ. Երեւանի, Թ. 5013:*

27. 1475, Աւետարան, գրուած Աթարեկենց Գրիգորի ձեռքով, Արգելանայ Վանքին մէջ, իր եղբոր Մկրտիչ բարոնապետի փափաքով. նկարադարդած է Մինաս. 2. *Ձեռ. Պոստընի Ժողովրդային Գրադարանի: Սիոն, 1970, էջ 316:*

28. 1482, Ճառքնտիր և Տօնական. օրինակած է Յովհաննէս Քահանայ, Կտուց Անապատի մէջ. ծաղկած է Մինաս. 2. *Ձեռ. Երեւանի, Թ. 4869:*

29. 1483, Աւետարան, գրած է Յովհաննէս Քահանայ, Կտուց Անապատի մէջ. ծաղկած է Մինաս. 2. *Ձեռ. Երեւանի, Թ. 6879:*

Ն. ԵՊՍ. ԵՈՎԱԿԱՆ